Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2021 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ..... 4

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 6

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 26

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 36

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 42

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ 46

6.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 47

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 49

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..54

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 56

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՋՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 63

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2021 թվականի առաջին կիսամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և նախատեսված ծավալով կատարվել են հետևյալ միջոցառումները՝

- ✓ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում,
- ✓ մանկական ամառային ճամբարներում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.
- ✓ Տարեկան ծրագրում ներառված մարզպետարանների աշխատակազմում տեսչական ստուգումների իրականացում.
- ✓ մասնակցություն Տրանսպորտի վերահսկողության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակմանը.
- ✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ մամուլի ասուլիսների, հարցազրույցների կազմակերպում և անցկացում.
- ✓ թեժ գծի սպասարկում.
- ✓ սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի տեղեկատվական սպասարկում.
- ✓ պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում.
- ✓ YouTube-ի պաշտոնական ալիքի համալրում և սպասարկում.
- ✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում.
- ✓ ոլորտային իրազեկող և կանխարգելիչ բնույթի սոցիալական հոլովակների, մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում.
- ✓ իրազեկում-հանդիպումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, տնտեսվարող սուբյեկտների հետ՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու և կանոնակարգելու նպատակով.
- ✓ ԶԼՄ-ներում տեղ գտած վերահսկողության ոլորտին առնչվող և հանրային հետաքրքրություն առաջացնող հրապարակումների մշտադիտարկում, հայտնաբերված

հրապարակումների վերաբերյալ արագ արձագանքում (պատասխանատուների կողմից պատասխանի, հերքման և/կամ պարզաբանման ստացում և տարածում)։

Տեսչական մարմնի 2021 թվականի առաջին կիսամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումը կատարվել է ոչ ամբողջ ծավալով.

- ✓ ուղևորափոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ նախատեսված ստուգումների իրականացումը.
- ✓ արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում.
- ✓ քաղաքաշինական տեսակետից առավել ռիսկային օբյեկտներում ստուգումների իրականացում
- ✓ խորհրդատվական նյութերի և/կամ իրազեկման բուկլետների և բրոշյուրների կազմում, ձևավորում՝ ֆինանսավորման բացակայության պատճառով։

2021 թվականի առաջին կիսամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումների կատարումը հետաձգվել է.

- ✓ Տեսչական մարմնի վերահսկողությամբ արձանագրված իրավախախտումների արձանագրությունների, կարգադրագրերի լրամշակում ըստ ոլորտների.
- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը։

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2021 թվականի առաջին կիսամյակում գործունեության տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 203 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 222 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում, հյուրանոցում, կառավարման հիմնարկներում: Նախատեսված ստուգումներից ավարտվել են 162-ը (169 օբյեկտ, նախատեսված ընդհանուր քանակի 76.13%), ևս երկու ստուգում իրականացվել է հանրությունից ստացված դիմում-բողոքի և պետական մարմնի կողմից ստացված գրության հիման վրա: Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 45 օբյեկտ չի ստուգվել չգործելու, ժամանակավոր չգործելու և սնանկության պատճառով: ՀՀ վարչապետի համաձայնությամբ 4 օբյեկտի ստուգում տեղափոխվել է 3-րդ եռամսյակ: 4 օբյեկտների կարգավիճակը պարզելու համար կատարվել է հարցում: Իրականացվել է 130 վերստուգում:

2020 թվականի առաջին կիսամյակում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 393 ստուգումներից ավարտվել էր 195-ը (նախատեսված ընդհանուր քանակի 49,6%): Եվս 2 ստուգում կատարվել էր ՀՀ վարչապետի հանձնարարականի և 2 ստուգում՝ հանրությունից ստացված (այդ թվում նաև թեժ գծով) դիմում-բողոքների հիման վրա, վերստուգում չի իրականացվել:

2020 և 2021 թվականների առաջին կիսամյակների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ըստ մարզերի 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում կատարած ստուգումները/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 847 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝



Ընդհանուր նշանակության պահեստների և բազաների տնտեսավարող սուբյեկտների 15 օբյեկտներում բացահայտվել է 138 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 16,3%-ը (ընդհանուր խախտումների քանակը 847 է)։

Հիմնական խախտումներն են.

- *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով – 12 դեպք,*
- *500 մ³ -ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 11 դեպք,*
- *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 10 դեպք,*

- *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 9 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 9 դեպք:*

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 2 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ, «ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ ՎԻԿՏՈՐԻԱ» ՍՊԸ):

200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 42 օբյեկտներում բացահայտվել է 163 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 19,2%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 21 դեպք,*
- *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 16 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 12 դեպք,*
- *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 12 դեպք,*
- *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 10 դեպք,*
- *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ3 տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 10 դեպք:*

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 10 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ, «ՖԱՍՏՖՈՒԴ» ՓԲԸ, «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ, «ՍԱՐԳՍՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԼԵՎԻԿԻ» Ա/Ձ, «Հ.Վ.Գ.» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ» Ա/Ձ, «ՋՈՅ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ, «ՎԻԿՏՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ, «ԱԳՈՒԼԻՍ» ՍՊԸ, «ԱՐՄԵՆԱՍԱ» ՍՊԸ):

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **մինչև 200 մ² մակերեսով առևտրի և հասարակական սննդի 6 օբյեկտ**, որոնցից մեկը՝ դիմում-բողոքով: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 5 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,6%-ը: Կազմվել և տրամադրվել է թերությունների բացակայության վերաբերյալ 3 տեղեկանք («ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ, «ՌՈԲԵՐՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ԴԵՂԱՏՈՒՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ):

200 մ² և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 51 օբյեկտներում բացահայտվել է 212 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 25,0%-ը: 7 տեղեկանք է տրամադրվել թերությունների բացակայության վերաբերյալ («ԴԻԿՍԻ» ՍՊԸ, «ՏԱՎԻՆԿՈ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ,

«ՎԱՐԳԱ-ՖՈՒԴ» ՍՊԸ, «ՄՐԳԱՆՈՒՇ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ՇԱՏՈ-ԱՌՆՈ» ՍՊԸ, «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ՓԲԸ)։

Հիմնական խախտումներն են.

- *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 30 դեպք,*
- *500 մ³-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 25 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 21 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 21 դեպք,*
- *շենքից տարահանման ելքերի քանակը պակաս է երկուսից, եթե դրանում տեղավորված են սենքեր, որոնք պետք է ունենան ոչ պակաս քան տարահանման երկու ելք – 19 դեպք,*
- *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերով - 15 դեպք։*

Մինչև 200 մ² մակերեսով արտադրական կազմակերպությունների 2 օբյեկտներում բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը։ Մեկ տեղեկանք է տրամադրվել թերությունների բացակայության վերաբերյալ («ՎԱՆԱՏՈՒՆ» ՍՊԸ)։

Բենզալցակայաններիի 16 օբյեկտներում բացահայտվել է 31 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,7%-ը։ Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 2 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ՍՈՒՍԱՆՆԱ ԵՎ ՌԱՖԻԿ» ՍՊԸ, «ԿՈՏԱՅՔ-91» Ա/Կ)։

Հիմնական խախտումներն են.

- *հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 7 դեպք,*
- *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 6 դեպք,*
- *բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 5 դեպք։*

Բնակելի շենքերի, հյուրանոցների և հանրակացարանների 1 օբյեկտում բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը։

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **գազալցավորման կայանների 42** օբյեկտ, որոնցից մեկը՝ պետական մարմնի կողմից ստացված գրության հիման վրա («ԿԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ ԼԵՎՈՆԻ» Ա/Ձ)։ Ստուգումների արդյունքում բացահայտվել է 254 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 30,0%-ը։

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է **7** տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ՇԱՀՈՒՄՅԱՆ-ԳԱԶ» ՍՊԸ, «ԳԱԳԱ-ԷՏ» ՍՊԸ, «ՏԻԳՀԱՐ» ՍՊԸ, «ԳԱՎԲԱԶ» ՍՊԸ, «ՎԻԳՀԱՍ» ՍՊԸ, «ՎԵԴԻ ԳԱԶ» ՍՊԸ, «ՆԻԿԱ-ԿԱՏՐԻՆ-ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ):

Հիմնական խախտումներն են.

- *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ3 տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 23 դեպք,*
- *ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն - 16 դեպք,*
- *օդափոխության համակարգերում կիրառված չեն պայթյունաանվտանգ կատարմամբ օդափոխիչներ և էլեկտրաշարժիչներ – 16 դեպք,*
- *արտածման համակարգերից օդի արտանետումը չի կատարվում շենքից վեր՝ ոչ պակաս քան 2 մետր բարձրության վրա – 15 դեպք:*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող 2 օբյեկտներում բացահայտվել է 2 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,2%-ը: Ստուգումների արդյունքում տրամադրվել է թերությունների բացակայության վերաբերյալ մեկ տեղեկանք («ՍՊԱՅԿԱ ՍՊԸ» ՍՊԸ):

Կառավարման հիմնարկների համար տնտեսավարող սուբյեկտների 9 օբյեկտներում բացահայտվել է 34 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 4,0%-ը: Ստուգումների արդյունքում տրամադրվել է թերությունների բացակայության վերաբերյալ 2 տեղեկանք («ՍՊԻՏԱԿ ՏՆԱԿ» ՍՊԸ, «ՄԱՍՏԵՐ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ):

Հիմնական խախտումներն են.

- *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակներով և փողրակներով – 5 դեպք,*
- *տանիքի պարագծով տեղակայված մետաղական ճաղաշարը չի գտնվում սարքին վիճակում – 4 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 4 դեպք:*

Սոցիալական ապահովության կազմակերպությունների ծերանոցների, հաշմանդամների տների, մանկատների համար տնտեսավարող սուբյեկտների մեկ օբյեկտում խախտում չի բացահայտվել, տրամադրվել է տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՋԵՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ):

Առաջին կիսամյակում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման

ժամանակացույցը սահմանող 135 կարգադրագիր, 36 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ:



Իրականացվել է 130 վերստուգում, որոնց արդյունքում խախտումների քանակը նվազել է 63,3%-ով: Վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 62 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ:



Վերստուգումներն ըստ գործունեության ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,49 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,22-ը:

Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 1,5 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,5-ը:

2021 թվականի առաջին կիսամյակում կատարված ստուգումների 98,8%-ը նախատեսված էր 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 1,2%-ը՝ ոչ պլանային է:

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,79 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,03-ը:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով առաջին կիսամյակի ընթացքում նախատեսված էր կատարել 16 ստուգում տրանսպորտի բնագավառում, սակայն ՀՀ կառավարության 08.08.2019թ. 1025-Ն որոշման հավելված 1-ում փոփոխություն կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջին եռամսյակում տարեկան ծրագրովա նախատեսված ստուգում չի իրականացվել և բոլոր ստուգումները ՀՀ վարչապետի համաձայնությամբ վերաբաշխվել են 2021 թվականի մնացած երեք եռամսյակների միջև։ Արդյունքում առաջին կիսամյակում իրականացվել է 9 ստուգում, ինչը կազմում է նախատեսվածի 56,25 %-ը։ 2020 թվականի նույն ժամանակահատվածում, պայմանավորված հայտարարված արտակարգ դրությամբ, 17 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 8-ը (նախատեսված քանակի 47%-ը)։

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 33 (2020թ.՝ 41) խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

- *Փոխադրումներ իրականացնողի այլ տեսակի վառելիքով շահագործվող տրանսպորտային միջոցները շահագործվում է առանց գազի բալոնների ճնշափորձարկման վկայագրի հիման վրա – 5 տնտեսավարող սուբյեկտի մոտ* (2020թ.՝ 5)
- *երթուղու չվացուցակով սահմանված մեկնման ժամերի պահպանման պահանջի խախտումներ – 3 տնտեսավարող սուբյեկտի մոտ* (2020թ.՝ 4),
- *Փոխադրումներ իրականացնողի տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործումը չի իրականացվում համապատասխան պարբերականությամբ և սահմանված ժամկետներում տեխնիկական զննության անցկացման պայմաններում – 3 տնտեսավարող սուբյեկտի մոտ* (2020թ.՝ 4)։

Ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 9 կարգադրագիր (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 13)։

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 4,3 օր (2020թ.՝ 5), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,4-ը (2020թ.՝ 2,9)։ Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները (100%) նախատեսված են եղել տարեկան ծրագրով։

Նշված ժամանակահատվածում տրանսպորտի բնագավառում իրականացվել է 6 վերստուգում, որոնց արդյունքում 4 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ՝ թերությունների բացակայության վերաբերյալ։ Վերստուգումների արդյունքում վերացվել է ընդհանուր առմամբ 15 խախտում։

2020 թվականի նույն ժամանակահատվածում վերստուգում չի իրականացվել։

2021 և 2020 թվականների առաջին կիսամյակների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատական հարաբերակցությունը ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,8 օր (2020թ.՝ 5), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2-ը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված բոլոր ստուգումները նախատեսված են եղել Ստուգումների տարեկան ծրագրով:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

2021թ. ստուգումների տարեկան ծրագրով առաջին կիսամյակի ընթացքում ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել ստուգումներ 56 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 63 օբյեկտներում: Նախատեսված ստուգումներից իրականացվել է 50-ը (56 օբյեկտ, ընդհանուր քանակի 88,9%), որից 6-ը (7 օբյեկտ) չի ստուգվել՝ չգործելու պատճառով: Իրականացվել է 36 վերստուգում:

2020 թվականի նույն ժամանակահատվածում տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 133 ստուգում, COVID-19 համավարակով պայմանավորված ստուգումները կասեցվել էին, իրականացվել էր 55-ը (41%):

Վերոնշյալ ստուգումների և վերստուգումների գրաֆիկական պատկերներն ըստ մարզերի բերված են ստորև.







2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում միայն ստուգումների արդյունքում արձանագրվել է 715 խախտում (2020թ.՝ 352 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.





Հաշվետու ժամանակահատվածում 36 տնտեսավարող սուբյեկտների օբյեկտներում վերստուգումներ են անցկացվել, որոնց արդյունքում պարզվել է, որ արձանագրված 299 խախտումից 193-ը (74.4%-ով) վերացվել են (2020թ. 1-ին կիսամյակում վերստուգում չէր իրականացվել):



Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման

ժամանակացույցը սահմանող 71 կարգադրագիր (2020թ. ստուգումների արդյունքում՝ 52 կարգադրագիր)։

Նշված ժամանակահատվածում ստուգված տնտեսավարող սուբյեկտներից մեկին (Երևանում՝ ԷՆ ԷԼ ՋԻ ՍՊԸ) տրվել է թերությունների բացակայության մասին տեղեկանք (2020թ. 2 տեղեկանք), իսկ վերստուգումների արդյունքում՝ 20 տեղեկանք, որից.

8-ը՝ Շիրակի մարզում (ԻԳԻԹ, ԱՐԱՔՍ-95, ԲԵՌԼԻՆ ՀՅՈՒՐԵՐԻ ՏՈՒՆ, ԳՅՈՒՄՐԻ-ԳԱՐԵՋՈՒՐ և ՅՈՒՄՍ ՍՊԸ-ներ, ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ ԲԲԸ, ԲԷՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ Մ/Ճ ՓԲԸ, ՀԷՑ ՑԱՆՑԵՐ ՓԲԸ-ի ՂԱՐՍ Մ/Ճ ԱՍ),

4-ը՝ Կոտայքի մարզում (ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ի ՏՐԱՆՍԳԱԶ ՍՊԸ-ի ԱԲՈՎՅԱՆԻ ԳՇՄ ԱՍ, ԲՅՈՒՐԵՂ ԱԼԿՈ և ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ ԳԵՏԱՄԵՋ 2016 ՍՊԸ-ներ, ՍՅՈՒՆԷՆԵՐԳԱՇԻՆ ՓԲԸ),

3-ը՝ Սյունիքի մարզում (ԲԷՑ ԶԱՆԳԵԶՈՒՐ Մ/Ճ ՓԲԸ, ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ի ՍՅՈՒՆԻՔԻ ԳԳՄ ԱՍ, ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ի ՏՐԱՆՍԳԱԶ ՍՊԸ-ի ԳՈՐԻՍԻ ԳՇՄ ԱՍ),

2-ը՝ Արագածոտնում (ՆԻԳԱՎԱ, ՍԼՈՆԵՐ ՍՊԸ-ներ),

1-ական՝ Արարատում (ՀԷՑ ՓԲԸ ԱՐԱՔՍ Մ/Ճ ԱՍ), Արմավիրում (ՀԷՑ ՓԲԸ ՄՈՒՍԱԼԵՌ Մ/Ճ ԱՍ) և Տավուշում (ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ի ՏԱՎՈՒՇԻ ԳԳՄ ԱՍ)։



48 (2020թ.՝ 49) **տնտեսավարող սուբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում)** ստուգումների արդյունքում գրանցվել է 239 խախտում (2020թ.՝ 195), ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 33.4%-ը (ընդհանուր խախտումների քանակը 715 է)։ Հիմնական խախտումներն են.

- *գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգների բացակայությունը – 27 դեպք,*
- *գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների, այդ թվում՝ նաև եռակցողների, գիտելիքների ստուգումներ չանցկացնելը կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 26 դեպք,*

- *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգում չանցկացնելը կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 26 դեպք,*
- *գազատար խողովակների համապատասխանությունը ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին հավաստող փաստաթղթերի բացակայությունը – 17 դեպք:*

45 (2020թ.՝ 9) **գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքներում** ստուգումների արդյունքում բացահայտվել է **352 խախտում** (2020թ.՝ 43 խախտում), ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 49.2%-ը։

Հիմնական խախտումներն են.

- *Չի կատարվում գազատարի տեխնիկական շահագործման պրոֆիլակտիկ պլանային վերանորոգումը (29 դեպք),*
- *Չի կատարվում գազատարի տեխնիկական շահագործման շրջայցային կամ տեխնիկական սպասարկումը (զննում, կարգաբերում և մասնակի նորոգում) (28 դեպք),*
- *Առկա չեն գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրահանգներից՝ աշխատանքների կատարման անվտանգ մեթոդները (25 դեպք):*

11 (2020թ.՝ 8) **110կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ ենթակայանի և բաշխիչ սարքվածքի** տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է **91 խախտում** (2020թ.՝ 77 խախտում), ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12.7%-ը։

Հիմնական խախտումներն են.

- *Առկա չեն ԲՍ տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալները (7 դեպք),*
- *Հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո, ոչ պակաս, քան 6 տարին մեկ, չեն կատարվում հպման լարումների չափումներ (6 դեպք),*
- *Կարգագրով աշխատելիս չի ձևակերպվում նպատակային հրահանգավորումը, առաջնային թույլտվության նպատակային հրահանգավորման գրանցման մատյանում (4 դեպք),*
- *Սարքին վիճակում չեն ԲՍ-ի տարածքում կոպճային լցվածքները, յուղահեռացման սարքվածքները (4 դեպք),*
- *Չի պահպանվում էլեկտրակայանքների բանալիների պահպանման և հաշվառման կարգը (4 դեպք):*





Վերստուգումների գրաֆիկական պատկերներն՝ ըստ գործունեության բնագավառի, բերված է նկարում (2020թ. 1ին կիսամյակում վերստուգում չի իրականացվել)։



1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.5 օր (2020թ.՝ 4.02 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.3-ը (2020թ.՝ 1.96-ը):

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1.4 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 1.9-ը:

Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

Քաղաքաշինության բնագավառում

Քաղաքաշինության բնագավառում 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով առաջին կիսամյակում նախատեսված 325 ստուգումներից իրականացվել է 208-ը (2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում քաղաքաշինության բնագավառում ստուգում չի իրականացվել), ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 64%-ը: 117 օբյեկտ չի ստուգվել՝ շինարարական աշխատանքների բացակայության կամ սուբյեկտին ծանուցելու անհրաժեշտության (36 օբյեկտ), շինթույլտվության կասեցման (2 օբյեկտ) կամ ուժը կորցրած ճանաչելու (1 օբյեկտ), ավարտական ակտի և այն ստանալու դիմումի (53 օբյեկտ), դրական եզրակացության (4 օբյեկտ) և սեփականաշնորհման վկայականի (7 օբյեկտ) առկայության պատճառով: Կրկնակի տրամադրված շինարարական թույլտվությունների պատճառով Ստուգումների տարեկան ծրագրում 14 հասցե կրկնվում է:

Իրականացվել է 4 ոչ պլանային ստուգում՝ 2-ը Գեղարքունիքի մարզում, 1-ական Երևանում և Արմավիրի մարզում: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 212 ստուգում, որից 84-ը (39,62%) Երևանում, 30-ը (14.15%)՝ Կոտայքի, 21-ը (9.9%)՝ Սյունիքի, 16-ը (7.54%)՝ Արմավիրի, 12-ը (5.66%)՝ Տավուշի, 11-ը (5.19%)՝ Արարատի, 10-ական (4.72%)՝ Լոռու և Շիրակի, 9-ը (4.25%)՝ Արագածոտնի, 6-ը (2.83%)՝ Գեղարքունիքի և 3-ը (1.42%)՝ Վայոց Ձորի մարզերում:



Ստուգումների քանակն ըստ մարզերի

Ստուգումների արդյունքում արձանագրվել է 801 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Հիմնական խախտումները վերաբերում են.

➢ **շինարարություն իրականացնող** տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 250 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 31,21%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 49 դեպք,
- բետոնի փորձարկման ակտի բացակայություն՝ 32 դեպք,
- շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 32 դեպք.

➢ **շինարարության որակի** տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 192 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 23,97%-ը: Առավել կրկնվող խախտումները վերաբերում են

- շինարարության վարման մատյանում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումների բացակայությանը՝ 58 դեպք,
- շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չստորագրելուն՝ 39 դեպք,
- տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չլրացնելուն՝ 37 դեպք:

➢ շինարարության նկատմամբ **հեղինակային հսկողություն** իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 94 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 11,74%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 46 դեպք,
- հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 25 դեպք,
- բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 23 դեպք,

➢ **կառուցապատողների** մոտ հայտնաբերվել է 98 խախտում՝ ընդհանուր խախտումների 12,23%-ը, որից ավելի հաճախ՝ 22-ում՝ տեղեկանքում նշված չէ շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը, իսկ 21-ում կառուցապատողը չի ապահովել շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով,

➢ համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 157 խախտում, որը կազմում է ընդհանուր խախտումների 19,6%-ը,

➢ **ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող** կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 4 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,5%-ը,

➢ **փորձաքննություն իրականացնող** տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 6 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,75%-ը,

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 103 տեղեկանք, կազմվել և տրամադրվել է 33 պարտադիր կատարման ցուցում:



Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 98,11 տոկոսը նախատեսված էր Տարեկան ծրագրով, իսկ 1,9 տոկոսը կատարվել է ոչ պլանային:

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 7.8 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.02-ը:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով առաջին կիսամյակում նախատեսված էին ստուգումներ ՀՀ 5 մարզերում, որոնք ամբողջությամբ իրականացվել են: 2020 թվականի նույն ժամանակահատվածում 5 մարզերի ստուգումներից իրականացվել էր մեկ մարզի ստուգում՝ 20 %:

Նախատեսված 15 ստուգումների արդյունքում արձանագրվել է 443 խախտում, որոնցից 352ը բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված ստուգումների ժամանակ:

1. **Արարատի մարզի** Մասիս և Արտաշատ համայնքներում հայտնաբերվել է 31-ական խախտում, իսկ Արարատ համայնքում՝ 22 խախտում:
2. **Արմավիրի մարզի** Էջմիածին համայնքում հայտնաբերվել է 44 խախտում, Այգավան համայնքում՝ 10 խախտում: Մեծամոր համայնքում խախտում չի հայտնաբերվել:
3. **Կոտայքի մարզի** Չարենցավան համայնքում հայտնաբերվել է 37 խախտում, Աբովյան համայնքում՝ 20 և Մեղրաձոր համայնքում՝ 1 խախտում:
4. **Արագածոտնի մարզի** Աշտարակ համայնքում հայտնաբերվել է 44 խախտում, Արագածավան համայնքում՝ 30, Մաստարա համայնքում՝ 15 խախտում:
5. **Վայոց ձորի մարզի** Մալիշկա համայնքում հայտնաբերվել է 23 խախտում, Եղեգնաձոր և Գլաձոր համայնքներում՝ 22-ական խախտում:

Ըստ անհրաժեշտության իրականացվել է 8 ստուգում.

1. Հանրությունից ստացված բողոքի հիման վրա **Արարատի մարզի** Այնթապ համայնքում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել է 22 խախտում:
2. **Սյունիքի մարզում** ՀՀ վարչապետի հանձնարարականով իրականացված ստուգման արդյունքում Քաջարան համայնքում հայտնաբերվել է 6, Գորիս համայնքում՝ 16 և Մեղրի համայնքում՝ 27 խախտում:
3. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Շիրակի մարզում** ս.թ. փետրվարի 2-ից 9-ը իրականացված ստուգման արդյունքում Գյումրի համայնքում հայտնաբերվել է 8 խախտում:
4. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Շիրակի մարզում** ս.թ. հունիսի 8-ից 14-ը իրականացված ստուգման արդյունքում Գյումրի համայնքում հայտնաբերվել է 3 խախտում:
5. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Շիրակի մարզում** ս.թ. հունիսի 8-ից 14-ը իրականացված ևս մեկ ստուգման արդյունքում Գյումրի համայնքում խախտում չի հայտնաբերվել:

6. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Լոռու մարզում** ս.թ. հունիսի 8-ից 14-ը իրականացված ստուգման արդյունքում Վանաձոր համայնքում հայտնաբերվել է 1 խախտում:

7. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Լոռու մարզում** գրության հիման վրա իրականացված ևս մեկ ստուգման արդյունքում Վանաձոր համայնքում հայտնաբերվել է 8 խախտում:

8. Պետական կառավարման մարմնից ստացված գրության հիման վրա **Լոռու մարզում** գրության հիման վրա իրականացված ստուգման արդյունքում Ալավերդի համայնքում խախտում չի հայտնաբերվել:



Խախտումները հիմնականում վերաբերում են հողամասի նպատակային և գործառնական նշանակությանների հետ առնչվող հարցերին: Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ:

2020 թվականի 1-ին կիսամյակում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել էր 74 խախտում, որոնցից 66-ը՝ Տարեկան ծրագրով:



Տեսչական մարմնի կողմից հողօգտագործման բնագավառում իրականացված ստուգումների 38,46% կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները և 61,54%՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումները: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 3,27 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 0,87:

Ըստ անհրաժեշտության կատարված ստուգումների միջին տևողությունը կազմում է 2,5 օր, մարդկային ռեսուրսը՝ 1,1:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է ՀՀ-ում 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արձանագրված 2898 հրդեհի դեպք (2020թ.՝ 2756 հրդեհ), 396-ի դեպքում կազմվել են հրդեհի մասին ակտեր (2020թ.՝ 386 հրդեհ):



Տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 8, իսկ վնասվածքներ է ստացել 44 մարդ: Ստորև բերվում է 2021 և 2020 թվականների առաջին կիսամյակների ընթացքում արձանագրված հրդեհների, զոհերի և վնասվածք ստացածների համեմատական գրաֆիկը.



Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 74 **հրդեհատեխնիկական հետազոտություն** (2020թ.՝ 247): Ս.թ. հունիս ամսվա ընթացքում ՀՀ Կոտայքի, Արագածոտնի և Լոռու մարզերում գործունեություն իրականացնող 13 մանկական հանգստյան ճամբարներում Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից կատարվել են հետազոտություններ:

Ըստ վարչական շրջանների պատկերը հետևյալն է.



ՀՏՀ-ների արդյունքում բացահայտվել է 44 խախտում, որոնցից հիմնական խախտումները վերաբերում են.



Առանց թերությունների է շահագործվում **«ՊԻՈՆԵՐ»** ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԱՄԲԱՐԸ՝ (ՀՀ Կոտայքի մարզ):

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է **316** եզրակացություն (2020թ.՝ 224) նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 360 օբյեկտների (2020թ.՝ 235) շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 150-ը (42%)՝ Երևանում:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են հրդեհի ազդանշանի ինքնաշխատ 10 համակարգի փորձարկման աշխատանքներին:

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, միջպետական ավտոբուսային փոխադրումների ուղետոմսերի վաճառքի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 2081 վերահսկողական միջոցառում: 2020 թվականի նույն ժամանակահատվածում իրականացվել էր 4657 վերահսկողական միջոցառում, որն կրկնակի անգամ ավելին է ընթացիկ տարվա ընթացքում կատարարվածի համեմատ, ինչը պայմանավորված էր նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու շրջանակներում:



Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 1532 վերահսկողական միջոցառում (2020թ.՝ 2438), ինչը կազմում է ընդհանուր քանակի 73,6% (2020թ.՝ 52,3%), որոնց 11,1%-ը Կոտայքի մարզում, 17,9%-ը Շիրակի մարզում, 31 %-ը Երևանում և այլն՝ համաձայն պատկերի.



Վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 15,3%-ը (2020թ.՝ 33,3%) կազմում է թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ կատարված վերահսկողական բնույթի աշխատանքը: Ընդ որում, Երևանում իրականացվել է 76 (23,9%) միջոցառում, Արմավիրի մարզում՝ 69 (21,7%), Գեղարքունիքում՝ 59 (18,7%), Վայոց Ձորում՝ 46 (14,6%), Կոտայքում՝ 23 (7,3%), Արագածոտնում՝ 19 (5,9%), Շիրակում՝ 17 (5,4%), Տավուշում՝ 5 (1,5%), Լոռիում՝ 3 (1%):

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 172 (2020թ.՝ 177) գովազդային վահանակներ: Այս գործառույթը շարունակական է:

Հ/Հ	Մարզեր	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը
1	Արագածոտն	35
2	Արարատ	15
3	Արմավիր	13
4	Գեղարքունիք	20
5	Լոռի	8
6	Կոտայք	22
7	Շիրակ	0

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 665 տեխնիկական ստուգում, որից 353 (53.1%) էլեկտրաէներգետիկական և 312 (46.9%) գազամատակարարման համակարգերում (2020թ.՝ 504 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 284 (56.3%) և 220 (43.7%)):



Արդյունքում տրվել է 547 (82.3%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 118 (17.7%) տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2020թ.՝ 426 (84.5 %) գործարկում և 78 (15.5%) մերժում):



Տրամադրված գործարկման եզրակացությունների և մերժումների քանակի համեմատական փոխհարաբերությունն ըստ մարզերի ունեն հետևյալ պատկերը՝





Հաշվետու ժամանակահատվածում էներգատեղակայանքներում տեղի ունեցած մահվան ելքով 12 պատահարների (2020թ.՝ 8) վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմակերպվել և իրականացվել է մասնագիտական քննություն, ընդ որում՝ 5-ը Երևանում, 3-ը Կոտայքի, 2-ը Շիրակի մարզերում, 1-ական Արարատի և Արմավիրի մարզերում (2020թ.՝ 8-ը, որից 2-ական Կոտայքի և Տավուշի, 1-ական էլ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում): Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 1 համակարգային պատահարի մասնագիտական քննություն:

Քաղաքաշինության բնագավառում

2021 թվականի 1-ին կիսամսյակի ընթացքում կատարվել են 846 դիտարկում, որոնցից 231-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, որն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝



2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարվել էր 1242 դիտարկում, որից 81-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:



Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ուսումնասիրվել է ՀՀ ողջ տարածքում գործող 1170 օբյեկտ՝ թեքահարթակների առկայությունը և դրանց գործող նորմերի պահանջներին համապատասխանությունն պարզելու նպատակով:

Ըստ մարզերի ուսումնասիրված օբյեկտներն ունեն հետևյալ բաշխվածությունը



Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ ցանկում ներառված օբյեկտների 7 տոկոսը չի գործում, 69-ը՝ չունի թեքահարթակ, 14-ի թեքահարթակները չեն համապատասխանում նորմերի պահանջներին: Եվ միայն օբյեկտների 10 տոկոսն ունի նորմերին համապատասխանող թեքահարթակներ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 1195 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում Երևանում՝ 436 (36,48%), Արմավիրում՝ 142 (11,88%), Կոտայքում՝ 123 (10,29%), Արագածոտնում՝ 102 (8,54%) և այլն՝ ըստ պատկերի:



Ստորև ներկայացվում է տվյալ ոլորտում կատարած աշխատանքների համեմատական պատկերն ըստ տարիների.



Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 656 դրական և 412 բացասական եզրակացություն, որոնք ըստ մարզերի այն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածություն.





2020թ. առաջին կիսամյակի համեմատությամբ 2021թ. նույն ժամանակահատվածում տրամադրվել են 297-ով ավելի ավարտական ակտերի վերաբերյալ եզրակացություններ:

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է 260 ինքնակամ կառույց ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Երևանում՝ 39 (15%), Շիրակի մարզում՝ 13 (5%), Լոռու մարզում՝ 55 (21%), Կոտայքի մարզում՝ 29 (11%), Արագածոտնի մարզում՝ 53 (20%),Սյունիքի մարզում՝ 4 (2%), Տավուշի մարզում՝ 13 (5%), Արարատի մարզում՝ 22 (9%), Վայոց ձորի մարզում՝ 11 (4%) և Արմավիրի մարզում՝ 21 (8%):





2021 թվականի առաջին կիսամյակում հայտնաբերված ինքնակամ կառույցների ընդհանուր քանակը 34-ով ավելի է, քան 2020 թվականի նույն ժամանակահատվածում բացահայտվածը: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:Իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն է ներկայացվել հաղորդում՝ քաղաքաշինության նորմերի խախտումների վերաբերյալ՝ ինչպես կառուցապատողների կողմից, այնպես էլ համայնքների ղեկավարների անգործության վերաբերյալ:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 249 բողոք, որից 177-ը (71,8%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 29-ը (11%)՝ տրանսպորտի անվտանգության, 17-ը (6,8%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 17-ը (6,8%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 9-ը (3,6%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2020 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 172 բողոք, որից 99-ը (57,5%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 33-ը (19,3%)՝ տրանսպորտի անվտանգության, 23-ը (13,4%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 10-ը (5,8%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 7-ը (4%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2021 և 2020 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.



Ըստ ամիսների հանրությունից ստացված բողոքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝



Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 58%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ստորև բերված է բողոքների բաշխվածության գրաֆիկն ըստ տարածքային միավորների և բնագավառների:



<u>Տեխնիկական և հիդեհային անվտանգության բնագավառում</u>

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 17 դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 8-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 47%: Հիմնավոր բողոքների 75% արդեն իսկ լուծում է ստացել, 3 գործ ընթացքի մեջ է: Հանրությունից ստացված 1 բողոքի հիման վրա իրականացվել է ստուգում: Բողոքներից 7-ը (41,2 %) ստացվել է թեժ գծով:

2020 թվականի նույն ժամանակահատվածում ստացվել է 23 բողոք, որից հիմնավոր են 13-ը (68,2%):



2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 161 գրություն, որից 153-ը (95%) արդեն իսկ լուծում են ստացել, 7-ը գտնվում է ընթացքի մեջ: Պետական մարմնից ստացված 1 գրության հիման վրա իրականացվել է ստուգում:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 29 %2020 թվականի առաջին կիսամյակում՝ 33% դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Արմավիրի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված հիմնավոր 25 բողոքներից 21-ը (84%) լուծում են ստացել, մեկն ընթացքի մեջ է, 3 բողոքի լուծում դուրս է Տեսչական մարմնի լիազորություններից: Բողոքներից 22-ը (75,8%) ներկայացվել է թեժ գծով:

2020 թվականի նույն ժամանակահատվածում հիմնավոր 22 բողոքներից լուծում էին ստացել՝ 19-ը (86,4%), 3 բողոքի լուծումը դուրս էր Տեսչական մարմնի լիազորություններից: Թեժ գծով ներկայացվել է 23 (69,7%) բողոք:



Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են երթուղիների թերի շահագործման կամ չշահագործմանը, տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը, չվացուցակների խախտումներին, կանոնավոր և ոչ կանոնավոր ապօրինի ուղևորափոխադրումներին և այլ:

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 5 գրություն, որից 2-ը լուծում են ստացել:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 4 գրություններից բոլորը լուծում են ստացել:

Հանրությունից ստացված 17 բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 6-ը (35%), լուծում են ստացել 5-ը (30%), ընթացքի մեջ են գտնվում 6-ը (35%):

2020 թվականի նույն ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ու տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացված 10 (100%) դիմում-բողոքները հիմնավոր էին, որից 9-ը լուծում էին ստացել (90%), 1-ը գտնվում էր ընթացքի մեջ:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված այլ հարցեր ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի

բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

Քաղաքաշինության բնագավառում

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 283 (22-ը թեժ գծով) դիմում-բողոք և գրություն, որից 106-ը (37.5%) ստացվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 177-ը (62.5%)՝ տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից: 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հանրությունից ստացված 177 բողոքներից 149-ը հիմնավոր են, 91-ն արդեն իսկ լուծում են ստացել:

2020 թվականի նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 99 դիմում-բողոք: Հիմնավոր է եղել 65 դիմում, լուծում է ստացել 41-ը (հիմնավոր բողոքների 63,1%), իսկ 24-ը գտնվում էին ընթացքի մեջ:



Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող խնդիրները վերաբերվում են հետևյալին.

- Շինարարական նորմերի խախտմանը՝ 74 դիմում,
- Ապօրինի շինարարությանը՝ 54 դիմում:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում 16 գրություն է ստացվել պետական մարմիններից, որից 13-ը լուծում է ստացել, իսկ 3-ն ընթացքի մեջ է:

Տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացվել է 9 դիմում-բողոք, որից հիմնավոր են 4-ը, իսկ լուծում է ստացել 2-ը (հիմնավոր բողոքների 50%-ը): Մեկ բողոքի հիման վրա իրականացվել է ստուգում:

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրվել է 7 դիմում-բողոք, որոնցից 4-ն ընթացքի մեջ են, 3-ի հիման վրա կատարվել են ստուգումներ: 2 ստուգման արդյունքում պարզվել է, որ դիմում-բողոքներում բարձրացված խնդիրները հիմնավոր չեն և ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ խախտում չի արձանագրվել:

Ս.թ. առաջին կիսամյակի ընթացքում թեժ գծով բողոք չի ստացվել (2020թ.՝ 1):

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

2021 թվականի առաջին կիսամյակում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 83 արձանագրություն, որից 4-ը (4,8%) Երևանում, 18-ը (21,7%) Գեղարքունիքի մարզում, 25-ը (30,1%) Կոտայքի մարզում, 27-ը (32,5%) Լոռու մարզում, 3-ը (3,6%) Արագածոտնի և Արարատի մարզերում, 2-ը (2,4%) Վայոց Ձորի և 1-ը (1,2%) Արարատի մարզերում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ: 2020 թվականի նույն ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 139 արձանագրություն, որից 25-ը (18%) Գեղարքունիքի մարզում, 19-ը Շիրակի մարզում և այլն՝ ըստ պատկերի:



Միաժամանակ նշված ժամանակահատվածում կայացվել է.

- ✓ 8 կարգման որոշում (2020թ՝ 7),
- ✓ 121 վարչական տույժ նշանակելու մասին որոշում (2020թ՝ 52),
- ✓ 1 գործունեության դադարեցման վերաբերյալ որոշում (2020թ՝ 2),
- ✓ սույն թվականի առաջին կիսամյակի ընթացքում կասեցման որոշում չի կայացվել (2020թ՝ 6):

Եվս 2 (2020թ՝ 5) վարույթ հարուցվել է «Տեխնիկական անվտանգության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետի նկատմամբ՝ ոչ հավաստի փորձագիտական եզրակացություն տրամադրելու դեպքով, կիրառվել է վարչական տույժ:

Նշանակվել է ընդհանուր առմամբ 14.860.000 դրամի չափով վարչական տուգանք, գանձվել է 4.575.000 (2020 թ.՝ 3.430.000) դրամ:

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 204 (2020թ.՝ 167) արձանագրություն, որից 83-ը (40,6%) Երևանում, 22-ը (10,78%) Արմավիրում, այլ մարզերն՝ ըստ պատկերի:



Կայացվել է 184 (2020թ.՝ 163) որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, 19 (2020թ.՝ 24) որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման մասին և վարչական վարույթի կասեցման մասին որոշում չի կայացվել (2020թ.՝ 1): Նշանակված գումարի չափը կազմել է 8 260 000, գանձվածը՝ 540 000 դրամ (2020թ.՝ 830 000 դրամ):



Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու

սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի և էներգասպառման բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 16 արձանագրություն: Կայացվել է 14 որոշում վարչական տույժ կիրառելու մասին, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին՝ 2 որոշում: Նշանակվել է 700.000 դրամի չափով վարչական տուգանք:

2020թ. նույն ժամանակահատվածում վերոնշյալ խախտումների վերաբերյալ կազմվել էր 10 արձանագրություն: Կայացվել էր 13 որոշում՝ վարչական տույժ կիրառելու մասին, 2 որոշում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին, 1 որոշում՝ վերադաս բողոքի մասնակի բավարարման վերաբերյալ, գանձված գումարի չափը կազմել էր 400.000 դրամ:

Քաղաքաշինության բնագավառում

Հաշվետու ժամանակահատվածում ազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 150 (2020թ.՝ 54) արձանագրություն: Կայացվել է 119 (2020թ.՝ 43) որոշում վարչական տույժ նշանակելու մասին, 1 որոշում՝ վարչական վարույթի կասեցման մասին: Աղյուսակում ներկայացված է արձանագրությունների և վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակի բաշխվածությունն ըստ մարզերի.

	վերահսկողության արդյունքների ամփոփման արձանագրությունների քանակ	վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակ
Երևան	102	63
Շիրակ	4	4
Լոռի	30	23
Գեղարքունիք	3	0
Կոտայք	8	8
Արագածոտն	2	2
Սյունիք	0	16
Տավուշ	0	2
Արարատ	1	0
Վայոց ձոր	0	0
Արմավիր	0	1
	150	119

Նշանակված գումարի չափը կազմում է 12120000 դրամ, գանձված գումարի չափը՝ 7640000 դրամ՝ նախորդ տարվա 7320000 դրամի փոխարեն։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2021 թվականի առաջին կիսամյակում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 22 արձանագրություն, կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին 19 որոշում, և նշանակվել է 5250000 դրամ տուգանք։

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բերվել է վերադասության կարգով 39 բողոք, որոնցից 10-ը հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում, 29-ը՝ տրանսպորտի: Բողոքները, որպես կանոն, վերաբերել են վարչական ակտերի իրավաչափությանը, նշանակված տուգանքների գումարները տարաժամկետելուն, վարչական պատասխանատվության ենթարկված անձանց ոչ պատշաճ ծանուցմանը:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում բերված 10 վերադաս բողոքներից 4-ով որոշում է կայացվել վերադաս բողոքը մերժելու և կայացված վարչական ակտն անփոփոխ թողնելու մասին, 4-ով որոշվել է բողոքարկված վարչական ակտերը կարճել, 2-ը գտնվում են քննության փուլում:

Տրանսպորտի բնագավառում բերված 29 վերադաս բողոքներից 22-ով որոշում է կայացվել վերադաս բողոքը մերժելու և վարչական ակտն անփոփոխ թողնելու մասին, 3-ը՝ կարճվել է, 1-ը թողնվել է առանց քննության, քանի որ բողոքը բերվել է դրա իրավասությունը չունեցող անձի կողմից, 3-ը գտնվում են քննության փուլում:



2020 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի դեմ բերվել է 13 բողոք վերադասության կարգով: Ըստ վերահսկման առանձին ոլորտների՝ պատկերը հետևյալն է.

Տեխնիկական անվտանգության բնագավառում կայացված 3 վարչական ակտ է բողոքարկվել, որոնցից 1-ը թողնել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել է, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական, և՛ վերադասության կարգով, 1-ը կարճվել է ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են:

Տրանսպորտի անվտանգության բնագավառում կայացված 2 վարչական ակտ է բողոքարկվել վերադասության կարգով, 2 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում բողոքարկվել է 1 վարչական ակտ, որը քննության արդյունքում մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել է անփոփոխ:

6.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2021 թվականի առաջին կիսամսյակի ընթացքում Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 36 հայցադիմում, որոնք վերաբերում են Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր) վիճարկմանը: Ըստ Տեսչական մարմնի գործունեության ոլորտների՝ բաշխվածությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



<u>Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում</u> դատական կարգով բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացված 23 (2020թ.՝ 4) վարչական ակտ: Ներկայացված 23 հայցադիմումներից 3-ի հիման վրա հարուցված դատական գործերի արդյունքում վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ (որոնցից 2-ով Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք), 2-ի՝ վարույթ ընդունելը մերժվել է, 3-ը՝ դեռևս վարույթ չի ընդունվել, մնացածի հիման վրա հարուցված դատական գործերը գտնվում են դատական քննության փուլում:

<u>Տրանսպորտի բնագավառում</u> բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացված 9 վարչական ակտ: Ներկայացված 9 հայցադիմումներից 8-ի հիման վրա հարուցվել է դատական գործ (1-ի վարույթ ընդունելու վերաբերյալ տեղեկատվություն դեռևս չկա), որից 1-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, մնացածը գտնվում են դատական քննության փուլում:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u> բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացված 1 վարչական ակտ: Գտնվում է դատական քննության փուլում:

Էներգետիկայի բնագավառում բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացված 1 վարչական ակտ: Գտնվում է դատական քննության փուլում:

Հողօգտագործման բնագավառում բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացված 2 վարչական ակտ: Գտնվում են դատական քննության փուլում:

2020 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 40 հայցադիմում, որից

- ✓ տրանսպորտի ոլորտում՝ 22 հայցադիմում, որից 1-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 4-ով հայցադիմումները վերադարձվել են, 17-ն՝ ընթացքի մեջ են.
- ✓ գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտում՝ 7 հայցադիմում, որից 5-ը ընդունվել է վարույթ, գտնվում են ընթացիկ փուլում, 2-ի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել.
- ✓ տեխնիկական անվտանգության ոլորտում՝ 10 հայցադիմում, որից 1-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ (Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք), 9-ն՝ ընթացքի մեջ են.
- ✓ քաղաքաշինության ոլորտում՝ 1 հայցադիմում, որով Տեսչական մարմինը հանդիսանում է երրորդ անձ, գտնվում է ընթացիկ փուլում.
- ✓ էներգետիկայի և էներգասպառման ոլորտում՝ 1 հայցադիմում, գտնվում է ընթացիկ փուլում:

Ստորև բերվում է 2021 և 2020 թվականների առաջին կիսամյակների ընթացքում Տեսչական մարմնի որոշումների դատական կարգով բողոքարկումների համեմատական բաշխվածությունն ըստ ոլորտների.



7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 54 հաղորդագրություն, որից ընդհանուր գործունեությանը վերաբերող աշխատանքային հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու կիսամյակում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 14 հաղորդագրություն, որոնք հրապարակվել են նաև տպագիր մամուլով (թվով 18 նյութ):

ՔՏՀԱՏՄ-ի կողմից նկարահանվել է 1 ընդհանուր իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից ստուգումների անցկացման կարգի վերաբերյալ https://www.youtube.com/watch?v=Rzb-OXh-NMw:

Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 27 գրավոր հարցում, որոնց տրվել են լիարժեք պատասխաններ: Լրատվամիջոցի հրապարակման հիման վրա նշված ժամանակահատվածում տրվել է 1 պաշտոնական պարզաբանում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկումների ընթացքում արխիվավորվել է ՔՏՀԱ տեսչական մարմնի գործունեության ոլորտներին վերաբերվող ընդհանուր թվով 380 լրատվական հրապարակում:

Վերոգրյալից բացի կատարվել է ծավալուն աշխատանք ըստ վերահսկողության ոլորտների.

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով 2021 թվականի առաջին կիսամյակում տրամադրվել է խորհրդատվություն 1032 (2020թ՝ 690, որից 382-ը՝ գրությունների տեսքով) տնտեսավարողի և քաղաքացու, որից 55,4%-ը կատարվել է տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների նախաձեռնությամբ:

Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7), կրակմարիչների քանակին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Նշված ժամանակահատվածում կազմակերպվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 33 հանդիպում, 1 հեռուստաելույթ, 1 ռադիոելույթ, հարցազրույց՝ 2 տպագիր հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 4 հոդված և 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=WmJSgnH3Mco , մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է 11 նյութ:

2020 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 11 նյութ, մամուլում՝ 42 հոդված, հեռաստատեսությամբ՝ 1 եթեր):

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

Տեսչական մարմնի կողմից խորհրդատվություն է տրամադրվել 143 (2020թ՝ 274 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 75 (2020թ՝ 140 դեպքում՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, 68 (2020թ՝ 134) դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների պահանջով:

Իրազեկման նպատակով կազմակերպվել է 164 հանդիպում, որոնց բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



Կատարվել է իրազեկող, նախազգուշացնող բնույթի 3 հրապարակում՝ միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից փոխադրավարձի անհարկի բարձրացման, ուղևորներին, կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարողներին և ֆիզիկական անձանց՝ հանրային տրանսպորտից օգտվելիս հակահամաճարակային կանոնների պահպանման, և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և Ճանապարհային ոստիկանության հետ համատեղ վերահսկողական աշխատանքների վերսկսկման վերաբերյալ:

Զանգվածային լրատվության հասանելի միջոցներով իրականացվել են իրարզեկող բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝

- 15 (2020թ՝ 61 հոդված Տեսչական մարմնի պաշտոնական կայքում,

5 տպագիր հարցազրույց ԶԼՄ-երին,

3 հեռուստաելույթ

2 ուղիղ եթեր

1 ռադիոելույթ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Խորհրդատվություն է տրամադրվել 183 տնտեսավարողի և քաղաքացու (2020թ՝ 179), ընդ որում՝ 117 դեպքում (63.9%) Տեսչական մարմնի նախաձեռնությամբ (2020թ՝ 179-ից 116-ի դեպքում (65%)): Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 739-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1423-Ն որոշումների:

Իրազեկելու նպատակով կազմակերպվել է 82 հանդիպում, որից 30-ը (36.6%)՝ Սյունիքի, 28-ը (34.2%)՝ Վայոց Ձորի, 23-ը (28%)՝ Գեղարքունիքի, 1-ը (1.2%)՝ Շիրակի մարզերում (2020թ.՝ 54 հանդիպում, որից 23-ը (42.6%)՝ Արարատի, 17-ը (31.5%)՝ Լոռու, 9-ը (16.7%)՝ Սյունիքի և 5-ը (9.2%)՝ Վայոց Ձորի մարզերում):

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 7 հաղորդագրություն: Մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել է 5 հաղորդագրություն:

2020 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 3 հաղորդագրություն, տպագիր լրատվամիջոցներով հրապարակվել 30 մամուլի հաղորդագրություն, նկարահանվել է 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=devd0V-NLuk:

Քաղաքաշինության բնագավառում

Խորհրդատվություն է տրամադրվել 598 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 254 դեպքում (43%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: 2020 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել 237 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 90 դեպքում (38%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:



Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).

✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).

✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)

✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).

✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությյունների փոփոխության հարցերին.(ՀՀ կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր)։

Իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության միջոցներով, այն է՝ հեռարձակվել է 4 հեռուստա և 1 ռադիոելույթ։ Տպագիր ԶԼՄ-ին տրվել է 2 հարցազրույց։ ՏՄ պաշտոնական կայքում հրապարակվել է 6 հոդված։ Մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել է 182 հաղորդագրություն։

Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին իրազեկելու նպատակով կազմակերպվել է 20 հանդիպում, պատրաստվել է 24 իրազեկող բնույթի գրություն։

2020 թվականի նույն ժամանակահատվածում ՏՄ պաշտոնական կայքում հրապարակվել է 3 հոդված, մամուլում՝ 5։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

ՔՏՀԱՏՄ աշխատակիցների կողմից 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև 18 խորհրդատվություն, որից 4-ը տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու նախաձեռնությամբ:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 8 հոդված: Մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել է 58 հաղորդագրություն: Տպագիր ԶԼՄ-երին տրվել է 1 հարցազրույց:

2020 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել էր 6 հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել էր 46 հաղորդագրություն:

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

1. Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) հետ միասին մշակվել է ամբողջապես նոր օրենքի՝ **Տրանսպորտի ոլորտում պետական վերահսկողության մասին ՀՀ օրենքի նախագիծ**, որի լրամշակված տարբերակը Գրասենյակ է ներկայացվել 29.06.2021 թվականին:

Անհրաժեշտությունը.Նախագծի մշակումը պայմանավորված է տրանսպորտի ոլորտում վերահսկողության իրավական կարգավորումների հստակեցման, պարզեցման և վերահսկողության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Տեսչական մարմնի գործունեությանն առընչվող իրավական կարգավորումների համապատասխանեցմամբ:

Ակնկալվող արդյունքը. Նախագծով առաջարկվում է տրանսպորտի բնագավառի վերահսկողությունը իրականացնել մեկ համապարփակ օրենքի իրավական կարգավորումների համապատասխան՝ ապահովելով տրանսպորտի ոլորտի վերահսկողության առավել արդյունավետ, անխափան և բնականոն գործունեությունը: Նախատեսվում է Տեսչական մարմնին օժտել համապատասխան գործիքակազմով, որով վերջինս հնարավորություն կունենա պատշաճ վերահասկողություն իրականացնել նաև այն կարգավորումների նկատմամբ, որոնք ներկայիս գործիքակազմով հնարավոր չէ իրականցնել:

Մասնավորապես, Նախագծով նախատեսվում է՝

- հստակեցնել տրանսպորտի ոլորտի վերահսկողության ուղղությունները և վերահսկողության ենթակա ընդհանուր պահանջների շարքը.
- սահմանել նոր վերահսկողության ձևը՝ մշտադիտարկումը, որ հնարավորություն է տալիս Տեսչական մարմնին վերահսկողությունը դարձնել պարբերական
- տեսչական մարմնի պաշտոնատար անձանց վերապահել տրանսպորտային միջոցը կանգնեցնելու լիազորություն.
- սահմանել սահմանային պետական վերահսկողության կազմակերպմանը վերաբերող կարգավորումներ.
- ավտոտրանսպորտային միջոցը կանգնեցնելու լիազորությունը վերապելու շրջանակներում սահմանել նաև համազգեստ կրելու պահանաջ, ինչպես նաև՝ զենք կրելու հնարավորություն:

2. Ս.թ. փետրվարի 8-ին Գրասենյակ է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը

հաստատելու մասին N 1025-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ, որով առաջարկվում է Որոշման հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ։

Անհրաժեշտությունը. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատվել են Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը։ Նշված որոշման հավելված 1-ով հաստատված է տրանսպորտի բնագավառում իրականացվող ստուգումների ստուգաթերթը։

2020 թվականի դեկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1994-Ն որոշումը։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխել նաև ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատված նախկին ստուգաթերթը։

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում տրանսպորտի ոլորտում իրականացվող ստուգումների ստուգաթերթը համապատասխանեցվել է գործող օրենսդրությանը և 2020 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված N 1994-Ն որոշմանը, ինչի շնորհիվ ապահովվում է տրանսպորտի բնագավառի վերահսկողության անխոչընդոտ իրականացումը։

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ։

Անհրաժեշտությունը. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1106-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատվել է ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները և չմասնատվող բեռներ փոխադրող թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու տրամադրման թույլտվության կարգը, տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն զանգվածները և չափերը հաստատելու մասին թույլտվության տրամադրման կարգը։

Նշված որոշման մեջ առկա են վրիպակներ և տեխնիկական սխալներ, որոնք վերահսկողություն իրականացնելիս խոչընդոտներ են առաջացնում։ Որոշման մեջ առկա թերությունները փաստի առաջ են կանգնեցնում նաև տնտեսավարող սուբյեկտներին, ովքեր՝ իրավական ակտի ոչ հստակության պատճառով չեն կարողանում համապատասխան վարքագիծ դրսևորել։

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում կվերացվեն Որոշման մեջ առկա թերությունները և տեխնիկական վրիպակները, կապահովվի տրանսպորտի բնագավառի վերահսկողության անխոչընդոտ իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն կտրվի իրավական ակտին համապատասխան վարքագիծ դրսևորել։

4. Մշակվել և ս.թ. հունիսի 24-ին Գրասենյակ է ներկայացվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին Վարչապետի որոշման նախագիծը, որով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 730-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր «է.» պարբերությամբ.

«է. սոցիալական գովազդը գովազդի այլ տեսակներով փոխարինվելու դեպքում գովազդի տեղադրման թույլտվության տրամադրման և բովանդակության նկատմամբ վերահսկողության իրականացում»։

Անհրաժեշտությունը. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-500-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին 2021 թվականի ապրիլի 15-ի N 386-Ա որոշմամբ, որով նախատեսվել է Վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծ։

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ապահովվելու է սոցիալական գովազդը գովազդի այլ տեսակներով փոխարինվելու դեպքում գովազդի տեղադրման թույլտվության տրամադրման և բովանդակության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը։

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կողմից կատարված վերահսկողական միջոցառումների շնորհիվ բացահայտվել և թիրախավորվել էին մի շարք ռիսկեր։ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ձեռնարկվել են միջոցառումներ դրանց նվազեցման ուղղությամբ։ Մասնավորապես.

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկերի աստիճանները և արձանագրվող հրդեհների վիճակագրությունը՝ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ շեշտը դրվել էր բարձր ռիսկային ոլորտներում առկա խնդիրները բացահայտելու և անվտանգությունն ապահովելու վրա: Սակայն 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրությամբ և ապա ռազմական դրությամբ պայմանավորված՝ Տեսչական մարմինը 2020 թվականի ընթացքում իրականացրել է տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների շուրջ 50 տոկոսը:

Ձեռնարկված միջոցներ. 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմվել է՝ ելնելով ՀՀ տարածքում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ոլորտային ռիսկայնությունը: Այս տեսակերից առավել ռիսկային են դիտարկվել.

- ✓ արտադրական նշանակության օբյեկտները,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայանները,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտները,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստները,
- ✓ հրդեհապայթունավտանգ օբյեկտները,
- ✓ հեղուկ վառելիքի, գազի, փայտանյութի և այլ այրվող նյութերի կուտակման վայրերը:

2021 Ստուգումների տարեկան ծրագրում ներառվել են նաև 2020 թվականի ընթացքում չիրականացված բոլոր ստուգումները:

2. Տեսչական մարմնի կողմից կատարված ստուգումները բացահայտել են գործող ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությունը:

Ձեռնարկված միջոցներ. Տվյալ խնդրի լուծման ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են ստուգաթերթերի լրամշակման աշխատանքներ, որոնք նախատեսվում է ավարտել ս.թ. 4-րդ եռամյակում:

3. **Ձեռնարկված միջոցներ.** Մանկական հանգստյան ճամբարներում հանգստացող երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով՝ 2021 թվականի մայիս-հունիս ամիսներին նախատեսվել և իրականացվել են նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ, որոնց արդյունքում բացահայտված խախտումները վերացնելու նպատակով տնտեսվարողներին տրվել են համապատասխան ցուցումներ, ցուցաբերվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

1. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:

Ձեռնարկված միջոցներ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքաների նախարարության կողմից մշակված տրանսպորտի ոլորտում օրենսդրական մի շարք նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ տրվել են առաջարկներ 6-8 նստատեղով թեթև մարդատար ավտոմոբիլով ֆիզիկական անձանց կողմից միջմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներով ցածր սակագներով կանոնավոր փոխադրումների իրականացնելու խնդրին լուծում տալու մասին, որը հանգեցնում է կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում գործունեություն իրականացնողների արդարացի դժգոհությանը: Ուղևորահոսքի նվազեցման արդյունքում կազմակերպությունները հրաժարվում են կանոնավոր երթուղիների սպասարկումից, ինչը խոչընդոտում է հանրապետության տարածքում կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպմանը: Տվյալ առաջարկները ընդունվելուց հետո կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում մի շարք դրական փոփոխություններ կլինեն:

2. **Ձեռնարկված միջոցներ.** Ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր բնակավայրերում ձեռնարկվել են լրացուցիչ և ավելի խիստ վերահսկողական մեխանիզմներ: Մասնավորապես, 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում միայն Երևան քաղաքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընդհանուր թվով 82 արձանագրություն նախորդ ողջ տարվա 109 արձանագրությունների փոխարեն: Իրականացվում է ամենօրյա հետևողական աշխատանք:

3. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ:

Ձեռնարկված միջոցներ. Տվյալ բնագավառի խնդիրների կարգավորման ուղղությամբ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են վերահսկողական միջոցառումներ Կոտայքի, Արարատի, Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում, կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 4 արձանագրություն, ինչը վկայում է խնդրի լրջության մասին: Գործառույթը կրում է շարունակական բնույթ: Իրականացվում են քննարկումներ ՀՀ ՏԿԵՆ հետ՝ ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների

կշռման և այդ նպատակով ավտոճանապարհներին առանձնացված հատուկ գրպանիկների առկայության և ստատիկ կշեռքների տեղադրման վերաբերյալ:

4. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերը ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: **Ձեռնարկված միջոցներ.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2021թ. հունվարի 20-ին ընդունված օրենքի համաձայն՝ առանց տեխնիկական զննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելու, տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր տվյալները և տեխնիկական զննության արդյունքները լիցենզավորված անձի կողմից անզգուշությամբ չփոխանցելը կամ առցանց թերի փոխանցելու նկատմամբ վերահսկողությունը ս.թ. օգոստոսի 16-ից կիրականացնի Տեսչական մարմինը:

5. ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) գովազդի (գովազդային վահանակների) տեղադրման օրինականության «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են շուրջ 53 ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ: Գովազդակիրները ստացել են խիստ ցուցումներ՝ գովազդային վահանակների տեղադրումը օրինականացնելու նպատակով:

6. Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանը:
Ձեռնարկված միջոցներ. Պետական սահմանի անցման չորս կետերում ավտոտրանսպորտային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը 2022 թվականի հունվարի 1-ից իրականացնելու է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

7. Տրանսպորտային անվտանգության ապահովմանը խոչընդոտող հիմնական պատճառներն են գործող օրենսդրության մեջ առկա բացթողումները:
Ձեռնարկված միջոցներ. Տվյալ բացը լրացնելու նպատակով Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից շրջանառության մեջ է դրվել «Տրանսպորտի բնագավառում պետական վերահսկողության մասին» օրենքի նախագիծը, որից

հետո հաշվի առնելով օրենքի նախագծի վերաբերյալ ՏՄ առաջարկությունների ծավալը Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ են ներկայացվել մի շարք առաջարկություններ, այդ թվում՝ նախագծի տեսքով։

Քաղաքաշինության բնագավառում

1. Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումները և վերահսկողական միջոցառումները ցույց են տվել, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտները շինարարական աշխատանքները կատարում են համաձայնեցված նախագծից և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների շեղումներով։

Ձեռնարկված միջոցներ. Տեսչական մարմնի մասնագետների կողմից ստուգումների ժամանակ բացահայտված խախտումների վերաբերյալ իրականացվում են վարչական վարույթներ և նշանակվում են վարչական տուգանքներ։ Ներկա դրությամբ ՀՀ Քաղաքաշինական կոմիտեի հետ համատեղ ընթանում են քննարկումներ քաղաքաշինության տեսակետից առավել ռիսկային սուբյեկտների լիցենզիաների կասեցման կամ դադարեցման գործընթացը կազմակերպելու վերաբերյալ։

2. Դիմում-բողոքների, ինչպես նաև պետական մարմինների կողմից ներկայացված գրությունների հիման վրա կատարված դիտարկումների շնորհիվ՝ համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում բացահայտվեցին բազմաթիվ տարաբնույթ թերություններ և բացթողումներ։ Մասնավորապես համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում և համաձայնեցվում են սահմանված կարգի խախտումով նախագծման և շինարարության թույլտվություններ ու համաձայնեցվում են նախագծման թույլտվությանը անհամապատասխան աշխատանքային նախագծեր։ Ակնհայտ է ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևանի վարչական շրջաններում քաղաքաշինական գործունեության նկատմամբ տարեկան տեխնիկական ստուգումների անհրաժեշտությունը, որոնք հնարավոր կլինի իրականացնել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելուց հետո։

Ձեռնարկված միջոցներ. Ստուգումների և վերահսկողական այլ աշխատանքների արդյունքում բացահայտված խախտումների, ինչպես նաև համայնքների ղեկավարների անգործության վերաբերյալ պարբերաբար հաղորդումներ է ներկայացվում ՀՀ իրավապահ մարմիններին։

3. ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների հետ կապված նորմատիվ պահանջները՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր), կառուցապատողների համար ստեղծում են կառուցապատման հետ կապված խնդիրներ։

Ձեռնարկված միջոցներ. Տեսչական մարմնի գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին առաջարկվել է վերոնշյալ հրամանի մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը:

Ձեռնարկված միջոցներ. Տեսչական մարմնի աշխատակիցները դիտարկումներ են իրականացրել ՀՀ կառավարության կողմից տրամադրված ցանկում ներառված օբյեկտներում և հարցի կարգավորման ուղությամբ ներկայացվել է առաջարկ՝ ՀՀ համայնքների բարեկարգման ծրագրերում նախատեսել և հետևողականորեն իրականացնել համապատասխան միջոցառումներ:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

1. 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, գրությունների հիման վրա և ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները շարունակում են մնալ հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիրներից է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը:

Ձեռնարկված միջոցներ. Տեսչական մարմնի աշխատակիցները ստուգումների ձևով վերահսկողություն է իրականացրել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ, հայտնաբերվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքներ, վարչական իրավախախտումների վերաբերյալ կիրառվել են տուգանքներ, հանրորեն առավել մեծ վտանգավորություն ունեցող արարքների վերաբերյալ հաղորդումներ են ներկայացվել իրավասու մարմիններ, որոնց առթիվ հարուցվել են քրեական գործեր և գտնվում են նախաքննության փուլում:

2. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխատավության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի

մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող խախտումների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր խախտումները կանխելու համար։

Ձեռնարկվող միջոցներ. Կազմվում է օրենսդրական նորմերի փոփոխության նախագիծ՝ սանկցիաների համաչափ սահմանման վերաբերյալ

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով Տեսչական մարմինների մասին 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

1. <u>ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ</u>

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտի ստուգումները և վերահսկողությունը չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, վերջիններս կարգավորվում են «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքներով, ուստի այս ոլորտի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայության և գնահատման հաշվարկ չի կատարվել:

2021 թվականին առաջին կիսամյակում տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը 0.18 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.18,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0.35,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0.16,

4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.05:

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2021 թվականին առաջին կիսամյակում տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը 0.18 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.18,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0.35,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0.16,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.05,

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

2021 թվականի առաջին կիսամյակի համար ռիսկի պլանավորման, վերլուծության և գնահատման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

2021 թվականի առաջին կիսամյակի համար տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել:

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.

Համաձայն կատարողական գնահատման գործող մեթոդաբանության տեսչական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների

քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակի չափորոշիչը գնահատվում է տարեկան կտրվածքով։

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին։

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը։

2021 թվականին առաջին կիսամյակում տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը 1.1 օր է։ Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 1.5,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 1.5,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 2.5։

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը։

2021 թվականին առաջին կիսամյակում բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ 0.8 է։ Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 1,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 1,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 1,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 1,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 0։

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2021 թվականի առաջին կիսամյակում ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է 4.7 օր: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 3.4,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 3.5,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 4.33,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 7.91,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 4.45:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

2021 թվականի առաջին կիսամյակում տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) 0 է:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշիչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով չափորոշիչում նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները:

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

3. <u>ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ</u>

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը.

2021 թվականի առաջին կիսամյակում ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը 0.2 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.01,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.1,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 0.9:

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշիչը գնահատվելու է տարեկան կտրվածքով:

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով.

2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է 60.097 հազ. դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1.53 աշխատակից: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 24,0 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,3 աշխատակից,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 27,7 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1 աշխատակից,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 40,0 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,7 աշխատակից,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ միջինում հատկացվել է 31,1 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,6 աշխատակից,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 284,9 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 2,7 աշխատակից:

3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

<u>Տրանսպորտի անվտանգության ոլորտ.</u>

Տրանսպորտի բնագավառում բերված 29 վերադաս բողոքներից 22-ով որոշում է կայացվել վերադաս բողոքը մերժելու և վարչական ակտն անփոփոխ թողնելու մասին, 3-ը՝ կարճվել է, 1-ը թողնվել է առանց քննության, քանի որ բողոքը բերվել է դրա իրավասությունը չունեցող անձի կողմից, 3-ը գտնվում են քննության փուլում:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում բերված 10 վերադաս բողոքներից 4-ով որոշում է կայացվել վերադաս բողոքը մերժելու և կայացված վարչական ակտն անփոփոխ թողնելու մասին, 4-ով որոշվել է բողոքարկված վարչական ակտերը կարճել, 2-ը գտնվում են քննության փուլում:

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

2021թ.-ի 1-ին կիսամյակում վարչական դատարանի կողմից կայացվել են թվով 35 դատական ակտեր, որոնցից 7-ը փոխանցվել է 2020 թվականից: Ընդ որում.

Տրանսպորտի անվտանգության ոլորտ.

- 7 հայցադիմում է ներկայացվել դատարան, որոնցից 2-ով կայացված վճիռները չեն բողոքարկվել և մտել են օրինական ուժի մեջ, իսկ մնացած 5 վարույթները գտնվում են դատաքննության փուլում:

2020թ-ից փոխանցված դատական գործերով կայացվել է 3 դատական ակտ տեսչական մարմնի դեմ, որոնք վերադասությամբ չեն բողոքարկվել:

Տեխնիկական անվտանգության ոլորտ.

- 14 հայցադիմում է ներկայացվել դատարան, որոնցից 10-ը վարույթներ գտնվում են դատաքննության փուլում, 3 հայցապահանջներ բավարարվել են, իսկ մեկը՝ մերժվել: Բավարարված հայցապահանջով վարույթներից մեկը մտել է օրինական ուժի մեջ, իսկ 2-ը բողոքարկվել են տեսչական մարմնի կողմից և գտնվում են վերաքննության փուլում:

2020 թվականից փոխանցված դատական գործերով կայացվել է 3 դատական ակտ տեսչական մարմնի դեմ, որոնք վերադասությամբ չեն բողոքարկվել:

Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտ.

- 2 հայցադիմում է ներկայացվել դատարան, որոնք գտնվում են դատաքննության փուլում:

Քաղաքաշինության անվտանգության ոլորտ.

- 2 հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Տեսչական մարմնի, որոնք բավարարվել են, չեն բողոքարկվել և մտել են օրինական ուժի մեջ:

2020 թվականից փոխանցված դատական գործով կայացվել է 1 դատական ակտ տեսչական մարմնի դեմ, որը վերադասությամբ չի բողոքարկվել:

Հրդեհային անվտանգության ոլորտ.

- *3 հայցադիմում է ներկայացվել դատարան, որոնցից երկուսը բավարարվել են, իսկ մեկը՝ մերժվել: Բավարարված հայցապահանջների դեմ Տեսչական մարմինը վերաքննիչ բողոքներ է ներկայացրել և այդ վարույթները գտնվում են վերաքննության փուլում: Հայցադիմումը մերժելու վճռի դեմ բողոք է ներկայացրել տնտեսավարողը և այս գործը ևս վերաքննության փուլում է:*